Կարգապահական գործ թիվ ԿԳ-23009

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԼՈՒԻԶԱ ՄԱՆՎԵԼԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Արաքս Վարդանյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Միքայել Դանիելյանի, Հայկ Սահակյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ դիմող Լուսինե Հարությունյանի **(այսուհետ՝ նաև Դիմող)** , և փաստաբան Լուիզա Հարությունյանի **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)**,

քննության առնելով փաստաբան Լուիզա Մանվելի Հարությունյանին (արտոնագիր՝ թիվ 308), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Լուսինե Հարությունյանը**,** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ նաև Պալատ),** հայտնել է, որ թիվ ԱՎԴ/0092/02/19 քաղաքացիական գործով հայցվորի ներկայացուցիչ հանդես է եկել փաստաբան Լուիզա Հարությունյանը:

Դիմողի պնդմամբ, փաստաբան Լուիզա Հարությունյանը տարբեր եղանակներով փորձել և մինչ օրս փորձում է վիրավորել իրեն և իր հարազատներին:

Դիմողը հայտնել է, որ փաստաբան Լուիզա Հարությունյանը 27.04.2020 թվականին զանգահարել է իր մորը՝ Գայանե Գրիգորյանին, և սկսել է հնչեցնել պատիվն ու արժանապատվությունն արատավորող խոսքեր վերջինիս հասցեին:

Մասնավորապես, ըստ Դիմումին կից ներկայացված ձայնագրության.

«Լուիզա -Գայան դու ես,

Գայանե – ում հետ եմ խոսում,

Լուիզա - ում հետ ես խոսում, շատ լուրջ մարդու հետ ես խոսում, ասեմ իմանաս,

Գայանե - ով է ով,

Լուիզա - սաղ Արտաշատը ասումա, որ դու բոզ ես, աղջիկդ բոզա, շենքիդ դեմն էլ

հերթ են կանգնել,

Գայանե - լավ են արել, ում հետ եմ խոսում,

Լուիզա - իհարկե լավ են արել, քիչ են արել,

Գայանե - ում հետ եմ խոսում,

Լուիզա – աշկտ հանողի հետ, էդքան բան, աշկտ–աչկտ,

Գայանե - դու համբերի…

Լուիզա– բա դու ինչքան էս համբերելու,

Գայանե – վայ վայ»:

Դիմողը նաև հավելել է, որ թիվ ԱՎԴ/0092/02/19 քաղաքացիական գործող հերթական դատական նիստի ժամանակ փաստաբան Լուիզա Հարությունյանը հերթական անգամ վիրավորանք է հասցրել իրեն, ինչին արձագանքել է նաև նիստը նախագահող դատավորը:

Դիմողի պնդմամբ, 19.09.2022 թվականի դատական նիստի ժամանակ փաստաբան Լուիզա Հարությունյանը նշել է, թե իբր Դիմողը փորձել է առևանգել իր դստերը՝ Հայկուշ Գևորգյանին, ինչի կապակցությամբ հարուցվել է քրեական գործ: Նշված հայտարարությունից հետո, Դիմողի պնդմամբ, ինքը միջամտում է, ասելով, որ ծնողի կողմից երեխային տեսնելը, սիրելը առևանգում չի համարվում, ինչին համաձայնվում է նաև նիստը նախագահող դատավորը:

Դիմողի պնդմամբ, նշվածին ի պատասխան փաստաբան Լուիզա Հարությունյանը հայտնել է, որ *«կհորդորեմ Դիմողին իրավական գիտելիքների առումով մի փոքր զերծ մնալ բարձրաձայնելուց, ինձ համար այս տարիների ընթացքում պարզ էր Ձեր կենսագրության էպիկրիզը, Ձեր էթնիկ ծագումը, և բոլորը շատ քաջատեղյակ են էդ մասին, եկեք մի հիշեցրեք Ձեր գենետիկ ծագման մասին…»:*

Նիստը նախագահող դատավորը փաստաբան Լուիզա Հարությունյանին՝ այդ արտահայտության կապակցությամբ, կոչ է անում կոռեկտության սահմաններից դուրս չգալ:

Նշվածի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Լուիզա Մանվելի Հարությունյանին (այսուհետ նաև՝ Փաստաբան) առաջարկվել է մինչև 2023 թվականի փետրվարի 14-ը ներկայացնել բացատրություն Լուսինե Հարությունյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը ներկայացված բացատրությամբ հայտնել է, որ 2016 թվականին քաղաքացիական գործի շրջանակներում ստանձնել է Դիմողի նախկին ամուսին Գևորգ Կորյունի Գևորգյանի շահերի պաշտպանությունը:

Փաստաբանի պնդմամբ, Դիմողը և նրա հայրը՝ ի սկզբանե, վատ են եղել տրամադրված իր նկատմամբ, վիրավորական արտահայտություններ են հնչեցրել իր հասցեին:

Փաստաբանը հայտնել է, որ, չնայած այդ հանգամանքին, ինքը փորձել է գործի շրջանակներում ինչ-որ հաշտեցման տարբերակներ քննարկել, սակայն ապարդյուն:

Փաստաբանը նշել է, որ Դիմողը նման վարքագիծ շարունակել է դրսևորել նաև հետագայում՝ 2017 թվականին ձմռանը Արարատի մարզի, Վերին Արտաշատ գյուղի համայնքապետարանում խնամակալության և հոգաբարձության նիստի ընթացքում, ինչպես նաև Արտաշատի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում:

Փաստաբանը հավելել է նաև, որ 17.03.2020 թվականին նույնիսկ դիմել է Արարատի ոստիկանության բաժին՝ ներկայացնելով դիմում, կապված Դիմողի մոր՝ Գայանե Գրիգորյանի կողմից իր անձի և ընտանիքի դեմ հնչեցրած անպատիվ խոսքերի, բարի համբավը արատավորելու, անձնական կյանքի դեմ սպառնալիքներ հնչեցնելու համար: (Նշվածի կապակցությամբ 19.03.2020 թվականին Փաստաբանի կողմից ներկայացվել է բացատրություն):

Փաստաբանը նաև հավելել է, որ հետագայում զանգ է կատարվել Գայանե Գրիգորյանին՝ փորձելով պարզել վերջինիս նման վարքագծի պատճառները, սակայն Գայանե Գրիգորյանը կրկին վիրավորական արտահայտություններ է հնչեցրել Փաստաբանի հասցեին, որոնք նրա հեռախոսը չէր ձայնագրել:

Փաստաբանը նշել է, որ չնայած Դիմողը կցել է ինչ-որ խոսակցության ձայնագրություն, սակայն չի անդրադարձել տարիներ շարունակ իրեն հասցեագրված, նրա կողմից հնչեցված խուլիգանական հայհոյանքներ պարունակող այլ ձայնագրություններին:

Փաստաբանը, անդրադառնալով թիվ ԱՎԴ/0092/02/19 քաղաքացիական գործով 19.09.2022 թվականի դատական նիստի ձայնագրությանը, հայտնել է, որ դատարանն իրեն նկատողություն չի հայտնել, և, իր կարծիքով, ինքը դատավարության ոչ մի մասնակցին անձնական վիրավորանք չի հասցրել:

Նշվածի հաշվառմամբ, Փաստաբանը խնդրել է մերժել կարգապահական վարույթի հարուցման հարցը:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 20.02.2023թ. թիվ 44-Ա/ԿԳ-23009 որոշմամբ փաստաբան Լուիզա Հարությունյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 4.1. կետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

22.02.2023թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 21.04.2023թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված է համարվել, որ Փաստաբանը կատարել է «կհորդորեմ Դիմողին իրավական գիտելիքների առումով մի փոքր զերծ մնալ

բարձրաձայնելուց, ինձ համար այս տարիների ընթացքում պարզ էր Ձեր կենսագրության էպիկրիզը, Ձեր էթնիկ ծագումը, և բոլորը շատ քաջատեղյակ են էդ մասին, եկեք մի հիշեցրեք Ձեր գենետիկ ծագման մասին» արտահայտությունները:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 21.04.2023թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 25.05.2023թ. ժամը 19:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

– Դիմող Լուսինե Հարությունյանը թիվ ԱՎԴ/0092/02/19 քաղաքացիական գործով դատավարության մասնակից է հանդիսացել: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ և դատական նիստերի արձանագրությամբ:*

– Թիվ ԱՎԴ/0092/02/19 քաղաքացիական գործով 19.09.2022թ. դատական նիստի ժամանակ Փաստաբան Լուիզա Հարությունյանը կատարել է *«կհորդորեմ Դիմողին իրավական գիտելիքների առումով մի փոքր զերծ մնալ բարձրաձայնելուց, ինձ համար այս տարիների ընթացքում պարզ էր Ձեր կենսագրության էպիկրիզը, Ձեր էթնիկ ծագումը, և բոլորը շատ քաջատեղյակ են էդ մասին, եկեք մի հիշեցրեք Ձեր գենետիկ ծագման մասին...»* արտահայտությունները: Սույն փաստը հաստատվում է թիվ ԱՎԴ/0092/02/19 քաղաքացիական գործով 19.09.2022թ. դատական նիստի ձայնագրության կրիչով (ձայնային կրիչ, ժամ 11:46, 18-րդ վարկյան):

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Լուիզա Հարությունյանը փաստաբան է հանդիսանում 23.05.1997թ. թվականից, և 2018-2023թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Լուիզա Հարությունյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի և Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման համար:

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 4.1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի գործունեությունը կարգավորող կանոններին, այդ թվում պետք է հարգանքով վերաբերվի դատավորին և/կամ դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի, արբիտրի, կամ*

վարույթի այլ մասնակիցների գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը:

Փաստաբանի գործունեությունը փաստաբանի վրա դնում է բազմազան իրավական և բարոյական պարտականություններ այդ թվում դատավարության մասնակիցների հետ փոխհարաբերություններում, որտեղ փաստաբանը ներկայացնում է վստահորդի շահերը: Այս հարաբերություններում փաստաբանը, նպաստելով իրավունքի զարգացմանը, իրավակիրառ պրակտիկայի բարելավմանը և ձգտելով արդարադատության պատշաճ և իրավաչափ իրականացմանը, պետք է հարգանքով վերաբերվի հակառակորդ կողմին, ում հետ նա առնչվում է՝ թույլ չտալով անհարգալից վերաբերմունք, քանի որ հարգալից վերաբերմունքի դրսևորումը ուղղակիորեն առնչվում է փաստաբանության ինստիտուտի հեղինակության և փաստաբանի դերի հասարակական ընկալման հետ:

Քննարկելով Փաստաբանի վարքագիծը վերը նշված համատեքստում՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում պատասխանել հետևյալ հարցադրումներին.

1. Արդյո՞ք Լուսինե Հարությունյանը թիվ ԱՎԴ/0092/02/19 քաղաքացիական գործով հանդիսանում է դատավարության մասնակից, իսկ Փաստաբանը մասնակցել է տվյալ գործին՝ Կանոնագրքի 4.1 կետի կիրառման տեսանկյունից:

2. Արդյո՞ք Պատասխանողի կողմից Դիմողին ուղղված արտահայտությունները կարող են դիտարկվել հարգալից վերաբերմունքի համատեքստում:

Պատասխանելով վերը թվարկված առաջին հարցադրմանը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Կանոնագրքի 4.1 կետից հետևում է, որ Կանոնագրքի նշյալ կետի խախտման համար մեղավոր ճանաչվելու համար ենթադրյալ իրավախախտումը պետք է տեղի ունենա դատավարական գործողություն կատարելիս:

Դատարանի կողմից կիրառվող վարվելակերպի կանոնները գործում են դատավարական գործողություններ կատարելիս, իսկ սույն կետի համատեքստում Փաստաբանը պարտավոր է, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին:

Գործում առկա նյութերից բխում է, որ թիվ ԱՎԴ/0092/02/19 քաղաքացիական գործի շրջանակներում Դիմողը հանդիսացել է սկզբնական հայցով պատասխանող, հակընդդեմ հայցով հայցվոր, իսկ Փաստաբանը ներկայացրել է իր վստահորդների շահերը: Պատասխանողի կողմից Դիմողի հասցեին խնդրո առարկա արտահայտությունները անելիս կատարվում էին դատավարական գործողություններ, ընթանում էր դատական նիստ: Այս փաստերը համարվում են հաստատված նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ կողմերն ընդունել են դրանք:

Ինչ վերաբերում է երկրորդ հարցադրմանը՝ Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործի շրջանակներում հաստատվել է, որ Փաստաբանը 19.09.2022 թվականի դատական նիստի ժամանակ նշել է, թե իբր Դիմողը փորձել է առևանգել իր դստերը՝ Հայկուշ Գևորգյանին, ինչի կապակցությամբ հարուցվել է քրեական գործ: Նշված հայտարարությունից հետո, Դիմողը միջամտում է՝ ասելով, որ ծնողի կողմից երեխային

տեսնելը, սիրելը առևանգում չի համարվում, ինչին համաձայնվում է նաև նիստը նախագահող դատավորը:

Վերը նշվածին ի պատասխան փաստաբան Լուիզա Հարությունյանը հայտնել է, որ *«կհորդորեմ Դիմողին իրավական գիտելիքների առումով մի փոքր զերծ մնալ բարձրաձայնելուց, ինձ համար այս տարիների ընթացքում պարզ էր Ձեր կենսագրության էպիկրիզը, Ձեր էթնիկ ծագումը, և բոլորը շատ քաջատեղյակ են էդ մասին, եկեք մի հիշեցրեք Ձեր գենետիկ ծագման մասին...»*, ինչը որևէ կերպ չի կարող ներառվել «հարգալից վերաբերմունք» պահանջի շրջանակներում:

Հարկ է նաև նշել, որ Փաստաբանը կարգապահական գործի քննության ընթացքում հայտնել է, որ ինքը խորապես կամաչեր, եթե իրեն հիշեցնեին իր էթնիկ ծագման մասին:

Հանձնաժողովի գնահատմամբ, վերը նշված արտահայտությունները ոչ միայն չեն կարող ներառվել «հարգալից վերաբերմունք» պահանջի շրջանակներում, այլ նաև վիրավորական են, ինչը գիտակցել է նաև Փաստաբանը, հետևաբար այն ընդունելի չէ հարգանքի վրա կառուցված հարաբերություններում: Հատկանշական է, որ խնդրո առարկա արտահայտություններին միջամտել է նաև գործը նախագահող դատավորը և Փաստաբանին բարեզսպության կոչ է արել:

Ինչ վերաբերում է Պատասխանողի այն փաստարկին, որ Դիմողը վիրավորանքներ է հնչեցրել իր հասցեին, ապա սույն գործի շրջանակներում չի քննարկվում Դիմողի կողմից թույլ տրված այս կամ այն վարքագիծը, քանի որ դիմողը փաստաբան չէ ու Կանոնագրքին չի ենթարկվում, իսկ կարգապահական վարույթը բացառապես Պատասխանողի վերաբերյալ է հարուցված:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ արձանագրվում է, որ Փաստաբանի վարքագծում առկա է Կանոնագրքի 4.1 կետի խախտում:

Կարգապահական տույժի ընտրությունը.

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի*

այլ հանգամանքներ:

Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները՝ այդ թվում նաև կարգապահական տույժերի բացակայությունը, ինչից ելնելով նրա նկատմամբ որպես հիմնական կարգապահական տույժ կիրառում է «նկատողություն», ինչպես նաև՝ որպես լրացուցիչ կարգապահական տույժ՝ «լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել» տույժի տեսակները:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետի պահանջներով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Լուիզա Մանվելի Հարությունյանի (արտոնագիր՝ թիվ 308) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն Դեոնթոլոգիա թեմայով, 4 ակադեմիական ժամ ժամաքանակով՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետի խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-23009-2-Ա
25 մայիսի 2023թ.
ք. Երևան